ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/11

ք. Երևան «28» հոկտեմբերի 2019թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 25460016 (քսանհինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար տասնվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **17** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ դատախազություն	**Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ**
ք.Երևան, Վ.Սարգսյան 5	**ք. Երևան, Զ. Սարկավագի 157**
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.	**«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ**
Հ/Հ 900011180081	**Հ/Հ 2472300000170000**
ՀՎՀՀ 02506634	**ՀՎՀՀ 00803554**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«28» հոկտեմբերի 2019 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	18211100/1	**Կիսավերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	79998	799980	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
2	18221400/1	**Անջրանցիկ վերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	34998	349980	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
3	18221400/2	**Անջրանցիկ վերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	28998	9511344	328	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	328	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
4	18231210/2	**Կիտել-շրջազգեստ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	լրակազմ	57996	579960	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
5	18231210/3	**Կիտել-շրջազգեստ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	լրակազմ	49998	499980	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
6	18231410/1	**Կիտել-տաբատ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	լրակազմ	45300	1812000	40	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
7	18231410/2	**Կիտել-տաբատ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	լրակազմ	48498	1939920	40	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	40	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
8	18331200/1	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	4398	2506860	570	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	570	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.

9	18331200/2	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	6000	120000	20	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
10	18331200/3	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	4500	387000	86	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	86	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
11	18331200/4	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	4398	2506860	570	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	570	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
12	18331200/5	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	6000	120000	20	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
13	18331200/6	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	4500	387000	86	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	86	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
14	18421110/1	**Շարֆեր**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	1500	492000	328	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	328	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
15	18421110/2	**Շարֆեր**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	2496	24960	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
16	18421120/1	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	3498	996930	285	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	285	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
17	18421120/2	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	6996	69960	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
18	18421120/3	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	3498	150414	43	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	43	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
19	18421170/1	**Գոտիներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	5496	1802688	328	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	328	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.
20	18421170/2	**Գոտիներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	հատ	9654	96540	10	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև

										20.12.2019թ.
21	35811190/1	**ՈՒսադիր**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ, ՀՀ	զույգ	1698	305640	180	ք. Երևան, Վ. Սարգսյան 5	180	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1	**Կիսավերարկու՝** **Վերարկու ձմեռային բարձրագույն դասի՝** մուգ կապույտ բարձր որակի դրապից, (արտ. , 537գ/մք խտությամբ 90%բուրդ, 10% Պ/Ա), ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ, վերարկուն կոճկվում է պլաստմասե չորս կոճակ օղակով: Երկու կողային գրպանները՝ լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներդիր գրպաններ : Հետևամասն ունի միջնակար, վերարկուի օձիքը հետ ծալված, օձիքի անկյուններում ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Աստառը մետաքսյա է՝ (8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ), երկու կողմերում ունի ծոցագրպան: Երկարությունը մինչև ծունկ: Ձախ թևքի արտաքին կողմի վրա, ուսակարից 90մմ ներքև կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով ասեղնագործ թևքանշանը:
2	**Անջրանցիկ վերարկու՝** **Անձրևանոց բարձրագույն դասի՝** մուգ կապույտ (214գ/մք խտությամբ, 51 % Պ/Է, 49% բամբակ) անջրաթափանց կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից: Աստառը մշակվում է 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ կտորով: Լանջափեշերը կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով , լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներդիր գրպաններ: Ձախ թևքի արտաքին կողմի վրա, ուսակարից 90մմ ներքև կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով թևքանշանը: Թիկունքը և առաջամասը ուղիղ ուրվագծով, օձիքը ծալովի, անձրևանոցի երկարությունը մինչև ծնկները:
3	**Անջրանցիկ վերարկու՝** **Անձրևանոց՝** մուգ կապույտ (214գ/մք խտությամբ, 51 % Պ/Է, 49% բամբակ) անջրաթափանց կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից: Աստառը մշակվում է 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ կտորով: Լանջափեշերը կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով , լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներդիր գրպաններ: Ձախ թևքի արտաքին կողմի վրա, ուսակարից 90մմ ներքև կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով թևքանշանը: Թիկունքը և առաջամասը ուղիղ ուրվագծով, օձիքը ծալովի, անձրևանոցի երկարությունը մինչև ծնկները:
4	**Կիտել-շրջազգեստ՝** **Կիտել ամենօրյա կանացի՝** (կտորը մուգ կապույտ 250գ/մք խտությամբ 60% բուրդ, 40%Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և առանց կողային երկու կտրվածքների, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանով 14մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիտելը դեպի ձախ կոճկումով՝՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանի պատկերով միաշարք երկու 22մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ /բորդո/ կարմիր 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշանները տեղադրվում են (կարվում են) կիտելի աջ և ձախ օձիքների վրա (օձիքի մակակարեր), իսկ զինվորական դատախազների դասային աստիճանների տարբերանշանները տեղադրվում են

	(կարվում են) կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա (ուսադիրներ): Զինվորական դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Կիտելի տարբերանշանները (օձիքի մակակարեր) պատրաստվում են մուգ կապույտ կիսակոշտ ուսադիրի նախշազարդ ժապավենով, որը երիզված է մուգ կապրմիր/բորդո/ մահուդե կտորով: **Կիսաշրջազգեստ ամենօրյա՝** կիսաբրդյա կտորից, ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:
5	**Կիտել-շրջազգեստ՝** **Կիտել տոնական սպիտակ կանացի՝** (կտորը սպիտակ 250գ/մք խտությամբ 60% բուրդ, 40%Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և առանց կողային երկու կտրվածքների, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանով 14մմ ոսկեգույն մետաղյա համածուլվածքից կոճակներ:Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիտելը դեպի ձախ կոճկումով, կարվում է սպիտակ գույնի կիսաբրդյա կտորից:՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանի պատկերով միաշարք երկու 22մմ ոսկեգույն մետաղյա համածուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ /բորդո/ կարմիր 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշանները տեղադրվում են (կարվում են) կիտելի աջ և ձախ օձիքների վրա (օձիքի մակակարեր), իսկ զինվորական դատախազների դասային աստիճանների տարբերանշանները տեղադրվում են (կարվում են) կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա (ուսադիրներ): Զինվորական դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Կիտելի տարբերանշանները (օձիքի մակակարեր) պատրաստվում են մուգ կապույտ կիսակոշտ ուսադիրի նախշազարդ ժապավենով, որը երիզված է մուգ կապրմիր/բորդո/ մահուդե կտորով: **Կիսաշրջազգեստ տոնական՝** (կտորը մուգ կապույտ 250գ/մք խտությամբ 60% բուրդ, 40%Պ/Է), ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:
6	**Կիտել-տաբատ՝** **կիտել՝** (կտորը մուգ կապույտ՝ 250գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և փողքերի երկու կողային կտրվածքով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երեքական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանով 14մմ ոսկեգույն մետաղյա համածուլվածքից կոճակներ:Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիտելը միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանի պատկերով միաշարք երեք ոսկեգույն մետաղյա համածուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով:Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կապույտ կտորից: **տաբատ՝** կիսաբրդյա կտորից, (կտորը մուգ կապույտ՝ 250գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակօղերով, կոճկվում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով,

	արտաքին գրպանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից վրա կարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով. Աստառը՝ 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ կտորից:
7	**Կիտել-տաբատ՝** **տոնական կիտել՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է 1-ին չափաբաժնով սահմանված կիտելի նկարագրին, կարվում է (կտորը սպիտակ գույնի՝ 250գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) կիսաբրդյա կտորից. Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով:Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՍ արտիկուլի սպիտակ կտորից: **Տոնական տաբատ՝** կիսաբրդյա կտորից, (կտորը մուգ կապույտ՝ 250գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակօղերով, կոճկվում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է մուգ կարմիր /բորդո/ մահուդե կտորից վրա կարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով. Աստառը՝ 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ կտորից:
8	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ երկարաթև՝** սպիտակ կտորից, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67%Պ/Է) ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով:
9	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ երկարաթև** /բարձր. դաս./՝ սպիտակ կտորից, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67% Պ/Է) ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով:
10	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ երկարաթև կին դատ. համար՝** սպիտակ կտորից, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67%Պ/Է) ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, դեպի ձախ կոճկումով 8 կոճակով, աջ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով:
11	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ կարճաթև՝** սպիտակ կտորից է, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67%Պ/Է) ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով, ուղիղ թևքածալերով, ձախ թևքին կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ /բորդո/ կարմիր 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազությունում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների (այսուհետ՝ զինվորական դատախազներ) համար՝ ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազություններում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին:

12	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ կարճաթև**/բարձր. դաս./՝սպիտակ կտորից է, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67%Պ/Է) ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով, ուղիղ թևքածալերով, ձախ թևքին կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ /բորդո/ կարմիր 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազությունում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների (այսուհետ՝ զինվորական դատախազներ) համար՝ ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազություններում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին:
13	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ կարճաթև կին դատ. համար՝** սպիտակ կտորից է, (արտ.8702, 180գ/մք խտությամբ 33% բնական վիսկոզա, 67%Պ/Է) ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, դեպի ձախ կոճկումով 8 կոճակով, աջ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով, ուղիղ թևքածալերով, ձախ թևքին կարվում է ՀՀ դատախազության խորհրդանշանով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ /բորդո/ կարմիր 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազությունում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների (այսուհետ՝ զինվորական դատախազներ) համար՝ ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազություններում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին:
14	**Շարֆեր՝** Վերարկուի օձիքի տակից օգտագործվող տրիկոտաժե գործվածքից (100% բամբակ) վզպատ: Գույնը՝ կապույտ, լայնքը՝ 24սմ, երկարությունը՝ 120սմ:
15	**Շարֆեր՝** Վերարկուի օձիքի տակից օգտագործվող տրիկոտաժե գործվածքից (50% բամբակ, 50% ակրիլ) վզպատ /բարձր. դաս./: Գույնը՝ կապույտ, լայնքը՝ 24սմ, երկարությունը՝ 120սմ:
16	**Փողկապներ՝** **Փողկապ՝** մուգ կապույտ գույնի, (արտ.2362, 35% բուրդ, 65% Պ/Է, 294գր.քմ խտությամբ) ունի լայնացած ուրվագծով ձևվածք, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ հավաքովի հանգույց: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշան:
17	**Փողկապներ՝** Փողկապ /բարձր. դաս./՝ մուգ կապույտ գույնի, (արտ.2362, 35% բուրդ, 65% Պ/Է, 294գր.քմ խտությամբ) ունի լայնացած ուրվագծով ձևվածք, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ հավաքովի հանգույց: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշան ոսկեզօծ թելով:
18	**Փողկապներ՝** **Փողկապ կին դատ. համար՝** մուգ կապույտ կտորից, 2 շեղանկյունաձև՝ լայն, կարճ և նեղ, երկարավուն կտորներից, որի նեղ, երկարավուն կտորը գտնվում է լայն, կարճ կտորի վրա, հանգույցի ներքևի կկենտրոնական մասում ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

19	**Գոտիներ՝** **Գոտի՝** կաշվե, սև, 50 մմ լայնությամբ միասնցք, մետաղյա ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, անհատական չափերով:
20	**Գոտիներ՝** **Գոտի՝** կաշվե, սև /բարձր. դաս./՝50 մմ լայնությամբ միասնցք, մետաղյա ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, անհատական չափերով, պատրաստված բարձրակարգ կաշվից:
21	**ՈՒսադիր՝** **Ուսադիրներ և աստղեր՝** արդարադատության 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի խորհրդականների տարբերանշանն ունի երկու երկայնական մուգ կարմիր երիզ: Արդարադատության 1-ին դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին երկայնական երիզների մեջտեղում ամրացվում է 3 ոսկեգույն հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին՝ 2 ոսկեգույն հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին՝ մեկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով: 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի խորհրդականների տարբերանշանն ունի մեկ երկայնական մուգ կարմիր երիզ: 1-ին դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին երկայնական երիզի վրա ամրացվում է 4 ոսկեգույն հնգաթև աստղ՝ 14մմ տրամագծով, 2-րդ դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին՝ 3 ոսկեգույն հնգաթև աստղ՝ 14մմ տրամագծով, 3-րդ դասի խորհրդականի տարբերանշանի մակերեսին՝ 2 ոսկեգույն աստղ՝ 14մմ տրամագծով: Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազություններում և կայազորների զինվորական դատախազություններում պաշտոն զբաղեցնող դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝ 1) կարովի (կիտելի վրա), տեղադրվում են թևքատեղադրման գծից ուսի կարի վրա այնպես, որ ուսի կարը համընկնի ուսադրի երկայնական առանցքային գծի հետ. 2) հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին: Ուսադիրը կիսափափուկ, ծգված վեցանկյուն է՝ երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է, իսկ վերևինը վերջանում է կտրվածքի կողմից, ստորին ծայրին զուգահեռ սուր անկյունով: Ուսադիրներն մուգ կարմիր մահուդի վրա մշակված մուգ կապույտ գույնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գույնի մակաշերտով: Ուսադրի երկարությունը 11-12 սմ է, լայնությունը՝ դասային աստիճաններ ունեցող անձանց համար՝ սկսած արդարադատության պետական խորհրդականից մինչև արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդականը ներառյալ՝ 4,5 սմ, իսկ արդարադատության 1-ին դասի խորհրդականից մինչև 3-րդ դասի խորհրդականը ներառյալ՝ 4 սմ: Ուսադրի եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր մահուդե գործվածքով: Ուսադիրներին, ըստ դասային աստիճանի, տեղադրվում են մետաղե ոսկեգույն աստղեր, իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14մմ տրամագծով ոսկեգույն կոճակ՝ Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով: Արդարադատության 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրները պատրաստվում են ոսկեզօծ թելից՝ նախշազարդ ուսադիրի ժապավենի վրա: Ուսադիրների վրա՝ 2 մուգ կարմիր մակաշերտ: Արդարադատության 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 3 ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 հնգաթև ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ մեկ հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով: 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրները պատրաստվում են ոսկեզօծ թելից՝ նախշազարդ ուսադիրի ժապավենի վրա: Ուսադիրների վրա՝ մեկ մուգ կարմիր մակաշերտ: 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 4 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14մմ տրամագծով, 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 3 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14մմ տրամագծով, 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14մմ տրամագծով: Ուսադիրներին աստղերը տեղադրվում են՝ 1) բարձրագույն դասային աստիճան ունեցող զինվորական դատախազների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա. 2) արդարադատության 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը մակաշերտի վրա, իսկ երրորդը՝ առաջին երկուսից բարձր, երկայնակի առանցքային գծի վրա. 3) արդարադատության 2-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա.

	4) արդարադատության 3-րդ դասի խորհրդականի համար՝ երկայնակի առանցքային գծի վրա. 5) 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը դաշտի կենտրոնում, երրորդը և չորրորդը՝ առաջին երկուսից բարձր, մակաշերտի վրա. 6) 2-րդ դասի խորհրդականի համար՝ դաշտի կենտրոնում. 7) 3-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա: Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը՝ համաձայն աղյուսակի:

Լրացուցիչ պայմաններ՝ ***ընդհանուր պայմաններին ծանոթանալու համար օգտվել " ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ԵՎ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 664-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀՀ կառավարության 12.04.2018թ N-441-Ն որոշման դրույթներից:***

1. Մատակարարը պարտավոր է հանդերձանքի գործվածքները, գույնը և նախնական տեսքը համաձայնացնել Պատվիրատուի հետ:
2. Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուր դատախազի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ:
3. Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր դատախազի համազգեստի չափերը վերցնել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումներում (ք. Երևան):
4. Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափ ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում:

Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և դատախազի անուն ազգանունը:

Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հացեների:

ԳՆՈՐԴ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300000170000
ՀՎՀՀ 00803554

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«28» հոկտեմբերի 2019 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18211100/1	**Կիսավերարկու**	-	-	-	-	799980	799980	799980	799980
2	18221400/1	**Անջրանցիկ վերարկու**	-	-	-	-	349980	349980	349980	349980
3	18221400/2	**Անջրանցիկ վերարկու**	-	-	-	-	9511344	9511344	9511344	9511344
4	18231210/2	**Կիտել-շրջազգեստ**	-	-	-	-	579960	579960	579960	579960
5	18231210/3	**Կիտել-շրջազգեստ**	-	-	-	-	499980	499980	499980	499980
6	18231410/1	**Կիտել-տաբատ**	-	-	-	-	1812000	1812000	1812000	1812000
7	18231410/2	**Կիտել-տաբատ**	-	-	-	-	1939920	1939920	1939920	1939920
8	18331200/1	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	2506860	2506860	2506860	2506860
9	18331200/2	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	120000	120000	120000	120000
10	18331200/3	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	387000	387000	387000	387000
11	18331200/4	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	2506860	2506860	2506860	2506860
12	18331200/5	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	120000	120000	120000	120000
13	18331200/6	**Վերնաշապիկներ**	-	-	-	-	387000	387000	387000	387000

14	18421110/1	Շարֆեր	-	-	-	-	492000	492000	492000	492000
15	18421110/2	Շարֆեր	-	-	-	-	24960	24960	24960	24960
16	18421120/1	Փողկապներ	-	-	-	-	996930	996930	996930	996930
17	18421120/2	Փողկապներ	-	-	-	-	69960	69960	69960	69960
18	18421120/3	Փողկապներ	-	-	-	-	150414	150414	150414	150414
19	18421170/1	Գոտիներ	-	-	-	-	1802688	1802688	1802688	1802688
20	18421170/2	Գոտիներ	-	-	-	-	96540	96540	96540	96540
21	35811190/1	ՈՒսադիր	-	-	-	-	305640	305640	305640	305640
	ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-	-	**25460016**	**25460016**	**25460016**	**25460016**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300000170000
ՀՎՀՀ 00803554

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«28» հոկտեմբերի 2019 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«28» հոկտեմբերի 2019 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն